ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

23 հունիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

91 (2757)

ք. Երեւան, Արովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ԱՆԵԾՔ-ԲԱՆԱԴՐԱՆՔ ԿԱՆԻ՞ ԵԿԵՂԵՑԻՆ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ







Նիկոլ Փաշինյանն իր իշխանության առաջին իսկ օրերից ձեռնոց է նետել Եկեղեցուն ու հոգեւորականներին: 2018թ. հեղափոխականների իշխանության օրոք Հայաստանում տեղի ունեցավ աննախադեպ մի երեւույթ. «Նոր Հայաստան՝նոր հայրապետ» նախաձեռնություն էր ձեւավորվել, որի անդամներն ընդդեմ կաթողիկոսի ակցիաներ էին իրականացնում Երեւանի փողոցներում՝պահանջելով նրա հրաժարականը: Իշխանության գալուց մեկ տարի անց Փաշինյանը «սպառնում էր ծնկի բերել եկեղեցականներին»: «Երբ մենք ասում ենք, որ Եկեղեցու ներքին կյանքի մեջ չենք մտնում, որոշ եկեղեցականներ սրանից եզրակացնում եւ ասում են՝ սրանք նախկին կառավարության նման չեն, եկեք քանդենք այս կառավարության ոտքերի տակ: Նրանք շատ ուժեղ հակահարված կստանան եւ ծնկի կբերվեն՝ բառի թե՛ բուն, թե՛ փոխաբերական իմաստով», - հայտարարում էր նա: Եկեղեցի-իշխանություն հարաբերությունները սրվեցին հատկապես 44-օրյա պատերազմից հետո, երբ եկեղեցին պաշտոնապես միացավ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջին՝ հորդորելով «հանձնառություն ստանձնել եւ վայր դնել վարչապետի լիազորությունները՝ կանխելու համար հասարակական կյանքում ցնցումները, նաեւ հնարավոր բախումներն ու ողբերգական հետեւանքները»: Այն, որ Մայր Աթոռն ու Փաշինյանի իշխանությունը տարաձայնություններ ունեն, առաջին անգամ հրապարակային խոստովանել է Գարեգին Երկրորդ կաթողիկոսը: Եկեղեցի-պետություն անջրպետն արդեն թերեւս անդառնալի կետին է հասել. Մայր աթոռը եւ իշխանության ներկայացուցիչներն այլեւս անթաքույց փոխադարձ մեղադրանքներ, քննադատություններ են հնչեցնում, անգամ պետական միջոցառումներին եւ տոներին են իշխանություններն ու Եկեղեցին խուսափում մասնակցել: Ի դեպ, Եկեղեցին, իր կանոնադրության համաձայն, կարող է անիծել, բանադրել (հեռացնել Եկեղեցու շարքերից) անհավատներին, Եկեղեցու դեմ դուրս եկած անձանց: «Ժողովուրդ» օրաթերթը Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանից  հետաքրքրվեց՝ հնարավոր է արդյոք այս իրավիճակում Եկեղեցին կիրառի այս գործիքը Նիկոլ Փաշինյանի դեմ, որքանով է կիրառելի բանադրումը հիմա: «Նախ՝բանադրանքի գործիքն արդեն 200 տարուց ավել է՝Եկեղեցին չի կիրառում: Բանադրանքն արժեք ունի նրա դեպքում, ում համար Եկեղեցին հոգեւոր իշխանություն է համարվում: Եթե Եկեղեցին նրանց համար հոգեւոր իշխանություն չէ, բանադրանքն ի՞նչ պետք է փոխի. Դուք շատ գերագնահատում եք բանադրանքի դերը: Հիմա եթե Եկեղեցին բանադրանք կիրառեց, դա ի՞նչ է փոխելու. անարդյունավետ ու ոչ կիրառելի գործիք է դա այս դեպքում: Բանադրանքը կարող է սթափեցնել միայն այն մարդուն, որը հաղորդության մեջ է Եկեղեցու հետ ու բանադրելու դեպքում կզրկվի հաղորդությունից: Այս մարդիկ ոչ էլ հաղորդության մեջ են Եկեղեցու հետ, ինչի՞ց պետք է զրկվեն: Բանադրանքը հավատացյալի համար է խնդիր, անհավատի համար ի՞նչ խնդիր է»,- բացատրեց Սրբազանը: Այսպիսով, Եկեղեցին թերեւս անիմաստ է համարում անիծել-բանադրելը Նիկոլ Փաշինյանի իշխանությանը:





«Քաղաքացիական պայմանագրի» դիլիջանյան ծեծկռտուքից հետո կրքերը չեն հանդարտվում. իշխանականները դեռ շարունակում են հաշիվ մաքրել միմյանց հետ: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ նախորդ շաբաթ ՔՊ-ի դիլիջանյան քեֆն ավարտվել էր ծեծկռտուքով. ՔՊ-ականները ծեծել էին Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթեւոսյանին, որը անցել ու ոմանց չէր բարեւել: Հիմնական հավաքվածները եղել էին ՔՊ-ական մարզպետներն ու համայնքապետերը: Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը դիմել էր Մաթեւոսյանին, թե՝որ անցնում ես, ինչի՞ չես բարեւում: Մաթեւոսյանն էլ հայտարարել էր, թե չի ուզում, չի բարեւում, որից հետո մարզպետն ու համայնքապետը սկսել էին վիճաբանել, քաշքշել իրար ու ծեծել: Պարզվում է՝այս միջադեպից հետո իշխանականները դեռ չեն հանդարտվում, պարբերաբար հանդիպում են իրար հետ, շարունակում «ռազբորկան»: Նախ՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանը, որը համարվում է Վայքի համայնքապետի հովանավորը, որոշել էր հաշիվներ պարզել Արմավիրի մարզպետ Էդուարդ Հովհաննիսյանի հետ: Սա էլ դեռ ամենը չէ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝վերջերս ՔՊ-ական մի խումբ պատգամավորներ հանդիպել են մարզպետների հետ: Կռվի սիրահար ՔՊ-ականները հասկացել են, որ բարկացրել են Նիկոլ Փաշինյանին, ու որոշել են հանդիպել, մի վերջին անգամ զրուցել, ծեծկռտուքի թեման փակել,  որպեսզի կրքերը չբորբոքվեն, ու Փաշինյանին չբարկացնեն: Արդյոք ՔՊ-ականները կհանդարտվեն, թե ոչ՝ժամանակը ցույց կտա, բայց այն, որ թավշյա հեղափոխականներն իրենց կրիմինալ վարքուբարքով չեն զիջում անգամ նախկիններին, դա փաստ է:




Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի՝կառավարության անդամները գործուղումներից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում պետք է հաշվետվություն ներկայացնեն, եւ այն հրապարակվի Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային կառավարման e-gov.am համակարգում: Սակայն «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ոչ բոլոր հաշվետվություններն են ներկայացվում կամ հրապարակվում: Օրինակ՝ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հունիսի 12-14-ը գործուղվել է Իտալիայի Հանրապետություն (Հռոմ) Հայաստանի Հանրապետության եւ Մալթայի Ինքնիշխան Ուխտի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին նվիրված պաշտոնական ընդունելությանը մասնակցելու նպատակով: Այս գործուղման հաշվետվությունը դեռ տեղադրված չէ: Նույնկերպ հայ-չինական համատեղ հանձնաժողովի 11-րդ նիստին մասնակցելու նպատակով 2023 թվականի հունիսի 5-9-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն էր գործուղվել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի գլխավորած պատվիրակությունը, սակայն այս գործուղման վերաբերյալ եւս հաշվետվություն տեղադրված չէ կայքում: Տեղեկություն առկա չէ նաեւ վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար Լիպարիտ Դրմեյանի՝հունիսի 4-8-ը ներառյալ Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման մասին: Այս երեւույթը երկու պատճառ կարող է ունենալ. կա՛մ պաշտոնյաները դրանք չեն ներկայացնում ճիշտ ժամանակին, կա՛մ կայքում այն չի տեղադրվում: Ու սա անում է այն իշխանությունը, որ օրուգիշեր խոսում էր իշխանությունների թափանցիկության մասին:



Ամիսներ առաջ ԱԳՆ մեր աղբյուրները փոխանցել էին, որ դեսպանի պաշտոնի է նշանակվելու Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի ավագ որդին՝գործարար Միսակ Բալասանյանը: Համաձայն ամիսներ առաջ մամուլում շրջանառված լուրերի՝Միսակ Բալասանյանը ցանկանում էր դառնալ ԱՄՆ-ում ՀՀ գլխավոր հյուպատոս, սակայն գործը գլուխ չի եկել, քանի որ Բալասանյանը սերտ կապեր ունի Ռուսաստանի հետ եւ, շրջանառվող լուրերի համաձայն, բիզնեսներ ունի Հայաստանում, ԱՄՆ-ում եւ Ռուսաստանում, ավելին՝հանդիսանում է նաեւ ՌԴ քաղաքացի: Չստացվեց ԱՄՆ-ն, հիմա էլ փորձում են վերջինիս դեսպան նշանակել Իրաքում, ու, ըստ հրապարակումների, արդեն ուղարկվել է համապատասխան ագրեմանը: Դժվար է հասկանալ, թե շահագրգռող  ինչ հանգամանք կա, որ ԱԳ նախարարը փորձում է Միսակին դարձնել դեսպան, ու թե Միսակին ինչը կարող է գրավել տվյալ երկրում, հատկապես որ երկիրը հեղինակավոր երկրների շարքում չէ, ավելին՝անվտանգության առումով այնքան էլ ապահով չէ:  Վերջին օրերին մամուլում նաեւ տարածվեցին լուրեր, թե  պայմանավորվածություններ են ձեռք բերվել Գյումրիում իշխանությունն ամբողջովին ՔՊ-ին տալու մասին: Այս ամենում անհասկանալի է մնում այն, թե ԱՄՆ դեսպանի գլխավոր հյուպատոսի առաջարկ ստացած Միսակ Բալասանյանը, որը բիզնեսներ ունի ՌԴ-ում, հիմա ինչո՞ւ պետք է համաձայնի Իրաքի դեսպանի պաշտոնին. իսկ գուցե բիզնեսների ընդլայնման  հարթակն է այնտեղ լավը եւ գրավիչ: Այս ամենի մասով մենք կփորձենք կապ հաստատել եւ մեկնաբանություն ստանալ Միսակ Բալասանյանից: Հիշեցնենք, որ արդեն հրապարակել էինք շրջանառված տեղեկություններ այն մասին, որ Գյումրու ապագա քաղաքապետ դառնալու է Աննա Հակոբյանի ազգական, 28-ամյա փոխքաղաքապետ Վահագն Մկրտչյանը:

ԶՐՈՒՅՑ

# ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ՝ ՋՈՒՐԿ ԵԼՔ ՈՒ ՄՈՒՏՔԻՑ

**Արցախն ամբողջությամբ պաշարման մեջ է: Հովհարային անջատումների պատճառով այստեղ ջրի լուրջ խնդիր է հասունացել, քանի որ միայն Սարսանգի ՀԷԿ-ն է աշխատում, սննդի եւ դեղորայքի հարցն Արցախում եւս օրհասական է:**



«Ժողովուրդ» օրաթերթն Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ: Ադրբեջանը Հակարիի կամրջի մոտ ապրիլ ամսից անցակետ էր տեղադրել՝ լիակատար շրջափակելով Արցախը:

-Իրավիճակը իսկապես շատ ծանր է, քանի որ մենք լրիվ պաշարման մեջ ենք եւ խեղդամահ ենք լինում: Այսպիսին է իրավիճակը իր բոլոր հետեւանքներով:

**-Պարո՛ն Բաբայան, Արցախի կառավարությունը հայտարարություն տարածեց, որ հովհարային անջատումների հետեւանքով ջրի խնդիր է առաջացել Արցախում: Այս մասին ի՞նչ կասեք:**

-Դա այդպես է, որովհետեւ հիմա գրեթե միայն Սարսանգի ՀԷԿ-ն է աշխատում, ունի շատ սահմանափակ ռեսուրսներ եւ երկար ժամանակ չի կարող գործել: Կան նաեւ մեկ-երկու փոքր ՀԷԿ-եր, որոնք մեծ նշանակություն չունեն: Շուտով, երբ ջուրը կսպառվի, մենք կհայտնվենք ծայրաստիճան կրիտիկական իրավիճակում:

**-Իսկ սնունդի ու դեղորայքի հարցը ինչպե՞ս է, պարո՛ն Բաբայան:**

-Շատ վատ է, եւ՛ սննդի պակաս կա, եւ՛ դեղորայքի պակաս կա: Պատկերացրե՛ք՝ Երեւանի նման քաղաքը մոտավորապես 10 օր չունենա պաշարներ, էլ չեմ ասում 7-8 ամսվա շրջափակման մասին, որը կտրուկ նվազեցրել է բեռնափոխադրումները: Միայն հումանիտար նպատակներով մի կերպ հասնում են Արցախ, դուրս բերում հիվանդներին եւ այլն: Հիմա դա էլ չկա:

**-Պարո՛ն Բաբայան, իսկ արցախցիները շարունակու՞մ են օգտվել Հակարիի կամրջի մոտ տեղադրված անցակետից, որը ադրբեջանցիներն էին տեղադրել եւ ամեն կերպ ցանկանում էին խոչնդոտել արցախցիների ելք ու մուտքը:**

-Իհարկե ոչ, արդեն բոլորն էլ փակված են: Նույնիսկ հիվանդներ տեղափոխել չենք կարողանում: Սա ոչ այլ ինչ է, քան սպանությունն այս մարդկանց: Ոչ ոք չի օգտվում: Փակ է: Նորից եմ ասում՝ նույնիսկ ծայրահեղ ծանր վիճակում գտնվող մարդկանց Կարմիր խաչը կամ ռուս խաղաղապահները չեն կարողանում դուրս բերել: Որեւէ մեկին չի թույլատրվում ելք ու մուտք անել:

**-Պարո՛ն Բաբայան, այս իրավիճակում Դուք ի՞նչ ելք եք կանխատեսում:**

-Նյութական դժվարությունները իսկապես շատ ծանր բան են, բայց միակ խնդիրը սա չէ: Այս ամենը ածանցյալ է այլ հարցերի: Մենք որեւէ մեկին չպետք է մեղադրենք, քանի որ մենք ունենք այդպիսի հիվանդագին սովորություն: Մեղադրում ենք բոլորին, բայց ոչ մեզ: Նույնիսկ թուրքին պետք չէ մեղադրել, որովհետեւ իրենք դրա մասին բացեիբաց հայտարարում են: Նախ պետք է փորձենք ինքներս մեր մեջ տեսնել, թե ինչ հարցեր ու սխալներ կան, որոնք պետք է շտկվեն:

Եթե մեզ համար Արցախը լինի սրբություն, եւ պայքարենք Արցախի համար, կարծում եմ՝ իրավիճակն ավելի լավ կլիներ:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ՆԱԽԿԻՆԸ ԼՈՒԾԱՐՎԵՑ

# ՆՈՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի որոշմամբ՝ նախատեսվում է ձեւավորել նախարարին կից նոր հասարակական խորհուրդ: Նախկին խորհրդի կազմը լուծարվել է:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, խորհուրդը պետք է լինի առավելագույն ներառական ու կենսունակ, լայն ընդգրկում ունեցող:

Պետք է ակտիվ եւ գործուն մասնակցություն ունենա բնապահպանության ոլորտի խնդիրների վերհանման, դրանց լուծման ծրագրերի ու ճանապարհային քարտեզների մշակման, ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման գործում:

Տարբեր հիմնախնդիրների շուրջ հանդես գա մասնագիտական եզրակացություններով ու առաջարկություններով:

Համագործակցի տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, անհրաժեշտության դեպքում իր գործունեության մեջ ներգրավի նաեւ համապատասխան մասնագիտական ուղղվածությամբ փորձագետների:

Շրջակա միջավայրի նախարարին կից հասարակական խորհուրդը բնապահպանական պլանների, ծրագրերի, քաղաքականության մշակմանը հասարակայնության մասնակցությունը համակարգող անկախ խորհրդատվական կառույց է:

Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

Խորհրդին անդամակցելու նամակ-հայտերը հնարավոր է ներկայացնել press@env.am էլեկտրոնային հասցեին նամակի միջոցով՝ գլխագրում նշելով «Հասարակական խորհուրդ»:

Հայտի մեջ պետք է ներառել՝

- անուն, ազգանուն,
- կազմակերպության անուն,
- կազմակերպության/անհատի վերջին երեք տարվա գործունեության համառոտ նկարագիր,
- եթե կազմակերպություն է, ղեկավար կազմի տվյալները,
- ինչ այլ հասարակական կազմակերպությունների/նախաձեռնությունների հետ է համագործակցում,
- բնապահպանության ոլորտի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, դրանց լուծմանն ուղղված նախատեսվող գործողությունների հակիրճ նկարագրություն,
- հեռախոսահամար,
- էլեկտրոնային հասցե:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետը սույն թվականի հունիսի 30-ն է:

## ԲԴԽ-ՈՒՄ ԱՇԽԱՏԵԼԸ՝ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՊԱՇՏՈՆ

Հայաստանի դատական իշխանության անկախության թիվ մեկ երաշխավոր Բարձրագույն դատական խորհրդի կազմում աշխատելը դատական համակարգում դարձել է անցանկալի պաշտոն: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ հայաստանյան մի շարք դատարանների նախագահներ, ստանալով ԲԴԽ անդամ դառնալու առաջարկ, մերժել են: Հիմա քաղաքական իշխանությունները փնտրտուքի մեջ են:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Արարատի մարզի դատարանի նախագահ Հարություն Պետրոսյանը, Գեղարքունիքի մարզի դատարանի նախագահ Սերոբ Մանուկյանը ստացել են Բարձրագույն դատական խորհրդի անդամ լինելու առաջարկներ, սակայն հրաժարվել են աշխատել: Նրանց համաձայնության դեպքում դատավորներն իրենք պետք է ընտրեին իրենց միջից դատավորների՝ ԲԴԽ անդամ դառնալու համար:

Իսկ ինչու՞ է ԲԴԽ-ն անդամ փնտրում: Բանն այն է, որ 2023 թվականի հուլիսի 19-ին՝ժամը 16:00-ին, հրավիրված է Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողով: Ենթադրվում է, որ օրակարգում լինելու է Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի ընտրության հարցը, քանի որ Խորհրդի անդամ Մեսրոպ Մակյանի լիազորությունները հունիսի 16-ից համարվում են դադարած, եւ նրա տեղը թափուր է մնում:

Նշենք, որ հունիսի 16-ին Մեսրոպ Մակյանի լիազորությունները ԲԴԽ-ում դադարեցվեցին՝իր դիմումի համաձայն:

Մեսրոպ Մակյանը Բարձրագույն դատական խորհրդի անդամ է 2019 թվականից:

2022 թ.-ին նշանակվել է նաեւ Վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող առանձին դատավոր եւ ԲԴԽ անդամից հրաժարվեց, քանի որ, ըստ լուրերի, նա նշանակվելու է Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի նախագահի պաշտոնում:

## ՀՅԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՆԱՄԱՅՈՒՄ

Պանամայում հունիսի 22-25 տեղի կունենա Ընկերվար երիտասարդների միջազգային միության (ԸԵՄՄ / International Union of Socialist Youth) ընդհանուր ժողովը, որին մասնակցում են ՀՅԴ Երիտասարդականի անդամ Հասմիկ Բուրուշյանը եւ ՀՅԴ-ի կողմից ԸԵՄՄ-ի փոխնախագահ Սարինե Աբրահամյանը: ՀՅԴ-ից հայտնում են, որ ԸԵՄՄ ընդհանուր ժողովը միության բարձրագույն ժողովն է, որը տեղի է ունենում երկու տարին մեկ անգամ, եւ որտեղ հաշվետվություն է ներկայացվում նախագահության կողմից, ընտրվում նոր նախագահություն եւ ճշտվում միջազգային միության եւ իր անդամ կազմակերպությունների առաջիկա անելիքներն ու ծրագրերը: Ժողովի օրակարգում ընդգրկվել է նաեւ Արցախյան հիմնախնդիրը, մասնավորապես՝ Արցախի շարունակվող շրջափակումը:

Ընդհանուր ժողովին հունիսի 26-30 կհաջորդի ԸԵՄՄ -ի ամառային քաղաքական ճամբարը (IUSY Festival), որտեղ կլինեն տարբեր ձեւաչափերով քննարկումներ, աշխատանքային խմբակներ, եւ առիթ կստեղծվի յուրաքանչյուր պատվիրակությանը ներկայացնել իր կազմակերպությունն ու երկիրը: Ընկերվարական երիտասարդների միջազգային միությունը Ընկերվար-Միջազգայնականի (Սոցիալիստական Ինտերնացիոնալ) ուղեկից երիտասարդական կազմակերպությունն է, որին անդամակցում են ավելի քան 163 կազմակերպություններ՝ աշխարհի շուրջ 110 երկրներից: Հ.Յ.Դ. Երիտասարդականը Ը.Ե.Մ.Մ.-ի լիիրավ անդամ է:

## ԳՇ ՊԵՏԸ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ



Եվրոպայում ԱՄՆ ցամաքային զորքերի հրամանատար, գեներալ Դերիլ Ուիլյամսի հրավերով ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնել է Գերմանիա՝ մասնակցելու Եվրոպական բանակների ամենամյա համաժողովին:

ՊՆ-ից հայտնում են, որ համաժողովի առաջին օրը տեղի է ունեցել գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանի ոչ ֆորմալ հանդիպումն ԱՄՆ ցամաքային զորքերի շտաբի պետ, գեներալ Ջեյմս ՄքՔոնվիլի հետ: Համաժողովի շրջանակներում նախատեսվում են ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի մի շարք այլ հանդիպումներ եվրոպացի գործընկերների հետ:

ԳՇ պետը նույն ձեւաչափով հանդիպել է նաեւ Եվրոպայում ՑԶ հրետանու պետ, հայազգի գեներալ-մայոր Ստեֆան Մարանյանի հետ:

## ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԻ ԼԵՀԱՍՏԱՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով հուլիսի 3-6-ը կգործուղվի Լեհաստան՝ Վարշավա:

Պատվիրակության կազմում կլինեն՝

1. Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը,
2. ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, Հայաստան-Լեհաստան բարեկամական խմբի ղեկավար Արուսյակ Ջուլհակյանը,
3. ԱԺ ՔՊ խմբակցութան պատգամավոր, Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը,
4. ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Կարեն Համբարձումյանը,
5. «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեւորգյանը:

Պատվիրակության կազմում կլինեն նաեւ ԱԺ աշխատակիցներ:

Պատվիարկության գործուղման ճանապարհածախսը, ներկայացուցչական ծախսերը, օրապահիկը եւ գիշերավարձը կկատարվի պետբյուջեի հաշվին, իսկ գիշերավարձի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ԿԱՐԵՎՈՐ

# ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԻՆ

**Արցախի ժողովրդավար ու խաղաղասեր ազգաբնակչությունն այսօր ենթարկվում է ավտորիտար ադրբեջանական ռեժիմի կողմից իրականացվող էթնիկ զտումների եւ կանգնած է ցեղասպանության սպառնալիքի առջեւ. այս մասին հայտարարել է կոնգրեսական Ադամ Շիֆը ԱՄՆ կոնգրեսի Թոմ Լանթոսի անվան մարդու իրավունքների հանձնաժողովում «Պաշտպանելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդին» խորագրով լսումների ժամանակ:**



«Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը շարունակում է ուժ, սպառնալիքներ գործադրել եւ ահաբեկչություն իրականացնել՝ նպատակ ունենալով արտաքսել կամ բնաջնջել Արցախի քաղաքացիներին եւ առանց հետեւանքների վերահսկողություն հաստատել հայկական տարածքների վրա: Շուրջ յոթ ամիս Արցախի ժողովուրդն ապրում է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի անօրինական շրջափակման պայմաններում, ինչը միջազգային իրավունքի եւ հրադադարի մասին 2020 թվականին ստորագրված եռակողմ հայտարարության խախտում է»,- ասել է կոնգրեսական Շիֆը:

Նրա դիտարկմամբ՝ Արցախն օգտագործվել է որպես սակարկության առարկա բանակցային գործընթացում՝ առանց որեւէ ներկայացվածության, ինչը հակասում է ԱՄՆ-ի դավանած արժեքներին եւ միջազգային իրավունքին: Կոնգրեսականը վկայակոչել է ՄԱԿ-ի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի առաջին հոդվածը, որում մասնավորապես ասվում է. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք»: Շիֆը հիշեցրել է, որ Արցախի Հանրապետությունը 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով միակամ հռչակեց իր անկախությունը եւ այդ քայլը համահունչ էր միջազգային իրավունքի, ինչպես նաեւ ՄԱԿ-ի կողմից 1970 թվականին վավերացված պետությունների միջեւ բարեկամական հարաբերությունների ու համագործակցության դաշնագրի դրույթներին:

Ժողովրդավարական ճանապարհով ընտրված Արցախի կառավարությունը շարունակում է բարձրաձայնել միջազգայնորեն ճանաչված ձեւաչափով Ադրբեջանի հետ խաղաղ բանակցային գործընթացում ներգրավվելու իր ցանկության մասին՝ որպես իրավահավասար կողմ, ինչն, ըստ կոնգրեսական Շիֆի, պետք է լինի անվտանգության, ինքնորոշման իրավունքի հարցում միջազգային երաշխիքների առկայության եւ բանակցող կողմերի պարտավորությունների կատարման պայմաններում:

«Արցախում ապրող 120.000 հայերի անվտանգությունն ու իրավունքները չեն կարող երաշխավորվել Իլհամ Ալիեւի ավտորիտար իշխանության կողմից, որը տարիներ շարունակ կազմակերպել է բազմաթիվ վայրագություններ արցախահայերի նկատմամբ, ներառյալ Շուշիի եւ Հադրութի հազարավոր հայերի էթնիկ զտումները 2020 թվականի պատերազմի ժամանակ: Ադրբեջանցիներն իրականացրել են նաեւ հայ ռազմագերիների խոշտանգումներ ու սպանություններ, ոչնչացրել են Արցախում հայկական կրոնական եւ մշակութային արժեքները»,- նշել է Շիֆը:

Կոնգրեսականի պնդմամբ՝ Միացյալ Նահանգները պետք է շարունակի աջակցել Արցախի ժողովրդին ու կանգնել նրա կողքին՝ հասնելու այն ճանաչմանը, որին արցախահայությունն արժանի է՝ ի թիվս այլ ժողովուրդների: ԱՄՆ-ն պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի Արցախում մարդու իրավունքների պաշտպանության համար՝ դատապարտելով Ադրբեջանի կողմից հրադադարի խախտումները,

«ԱՄՆ-ն պետք է կոչ անի Ադրբեջանին անհապաղ եւ առանց նախապայմանների ազատ արձակել բոլոր հայ ռազմագերիներին, պատժամիջոցների եւ օգնության դադարեցման միջոցով Ադրբեջանին պատասխանատվության ենթարկի Լաչինի միջանցքի շարունակական շրջափակման համար, պետք է ապահովի Արցախի ժողովրդի պաշտպանությունն ու ինքնորոշման իրավունքը, առավել եւս, որ արցախահայությունը հայտարարել է, որ չի հրաժարվի անկախության իր իրավունքից եւ արժանապատիվ, խաղաղ կյանքով ապրելու նպատակադրությունից»,- եզրակացրել է կոնգրեսական Շիֆը:

ԱՐՁԱԳԱՆՔ

# ՊԱՀՊԱՆԵԼ ԱՐՑԱԽԸ՝ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՎ

**Էթնիկ զտման քաղաքականությունն իրականություն դարձնելու նպատակով Ադրբեջանը շարունակում է ճնշումներն Արցախի բնակչության նկատմամբ. այդ մասին ֆեյսբուքյան գրառում է արել Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը:**

Նա ընդգծել է, որ դրանք աստիճանաբար խորանում են՝ ստանալով տարբեր դրսեւորումներ:

«Արդեն 8-րդ օրն է, ինչ Արցախն ապրում է լիակատար շրջափակման պայմաններում: Այստեղ մենք չենք ստանում ո՛չ դեղորայք, ո՛չ առաջին անհրաժեշտության ապրանքներ, ո՛չ սնունդ: Կենսական բոլոր ենթակառուցվածքների գործունեությունը եւս խափանված է: Դեռ հունվարի 9-ից ադրբեջանական կողմի միջամտությամբ կտրված է Հայաստան-Արցախ միակ բարձրավոլտ էլեկտրագիծը, ընդհատված է Հայաստանից Արցախ գազամատակարարումը, վառելիքի բացակայության պայմաններում գրեթե անհնար է դարձել շրջաններից դեպի մայրաքաղաք Ստեփանակերտ եւ հակառակը տեղաշարժը:

Այս անելանելի թվացող իրավիճակում ուզում եմ խոսել մի փոքր ծրագրի մասին, որը ջերմացնում է: «Մենք ենք մեր սարերը» գործակալությունն Արցախում սկսել է նոր ծրագիր, որի շրջանակում Ստեփանակերտում, Մարտունու, Մարտակերտի եւ Ասկերանի շրջաններում 70-ից ավելի մանկապարտեզներում եւ առողջապահական հաստատություններում արեւային ջրատաքացուցիչներ են տեղադրվելու: Սա նշանակում է, որ, անկախ հոսանքազրկումից ու գազազրկումից, այս կարեւոր սոցիալական հաստատություններն ունենալու են տաք ջուր այլընտրանքային եղանակով՝ արեւային էներգիայի շնորհիվ: Սա եւս այն ծրագրերի թվում է, որի «գաղափարի հեղինակը» շրջափակումն է եղել: Փոքրամասշտաբ ծրագիր է, բայց չեզոքացնում է ադրբեջանական կողմի ջանքերի ազդեցությունը առնվազն 70 հաստատության համար:

Այս օրինակը բերելով՝ ուզում եմ ասել, որ կարող ենք: Կարող ենք դիմակայել, կարող ենք պահպանել Արցախը, եթե գործենք խելացի, գտնելով ոչ ստանդարտ, «այլընտրանքային» լուծումներ, ոչ համաչափ, բայց ուժեղ պատասխաններ, որոնք հակառակորդին ստիպելու են հաշվի նստել մեզ հետ: Ամեն ինչ մեր ձեռքերում է», - գրել է նա:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԵՌԱԽՈՍ՝ ԿՅԱՆՔԻ ԳՆՈՎ

**2023թ. հունիսի 20-ին քաղաքացուց հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023թ. հունիսի 18-ին՝ ժամը 19:00-ին, 42-ամյա քույրը դուրս է եկել Կոտայքի մարզի Պտղնի գյուղի իր տանից եւ չի վերադարձել:**

Անմիջապես ձեռնարկվել են օպերատիվ-որոնողական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում կինը չի հայտնաբերվել:

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննությունը հանձնարարվել է քննչական խմբին: 42-ամյա կինը ճանաչվել է տուժող:

Նախաքննության ընթացքում կատարվել են մի շարք վարութային եւ քննչական գործողություններ, այդ թվում՝ 42-ամյա կնոջ հեռախոսի տեղայնացման, ինչպես նաեւ նրա ավտոմեքենան հայտնաբերելու ուղղությամբ: Պարզվել է, որ տուժողի Iphone 13 pro max մոդելի հեռախոսը 2023 թվականի հունիսի 20-ին վաճառվել է Երեւան քաղաքում:

Իրականացված անհետաձգելի քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում, ինչպես նաեւ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների հետ համատեղ ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների շնորհիվ նշված հեռախոսը վաճառած, ինչպես նաեւ այն ձեռք բերած անձինք հայտնաբերվել եւ ներկայացվել են վարույթն իրականացնող մարմնին:

Վերջիններս հարցաքննության ժամանակ ներկայացրել են քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ: Սպանություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքով նրանցից մեկը՝ 18-ամյա մի երիտասարդ, ձերբակալվել է:



Քննությամբ պարզվել է, որ 42-ամյա կինը սպանվել է հունիսի 18-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում: Դեպքի օրը տուժողը Փարաքարում հանդիպել է իր 18-ամյա ծանոթի հետ: Կնոջը պատկանող ավտոմեքենայով նրանք շրջել են, ապա մեքենան կայանել «Ծիրանանոց» կոչվող հատվածում: Երիտասարդը, 42-ամյա կնոջը պատկանող I phone 13 pro max մոդելի հեռախոսին տիրանալու եւ նրա ավտոմեքենան շահագործելու շահադիտական դրդումներով, սպանելու դիտավորությամբ աջ ձեռքով բռնել է կնոջ պարանոցից եւ ձախ ձեռքը դնելով նրա գլխի հետին հատվածին՝ հրելու եւ պարանոցը սեղմելու միջոցով կատարել է խեղդող հնարք՝ ապօրինաբար կյանքից զրկելով նրան:

Ապա 18-ամյա երիտասարդը կպչուն ժապավենով կապել է տուժողի ձեռքերը, ոտքերը եւ բերանը, մեքենայով նրան տեղափոխել Փարաքար համայնքի գերեզմանատանը հարակից տարածքում գտնվող, չշահագործվող քարի արտադրամաս: Դին հրելով գցել է տարածքում առկա ձորակը, քարերով ծածկել եւ, վերցնելով կնոջ բջջային հեռախոսը, վերջինիս ավտոմեքենայով հեռացել այդ վայրից: Հունիսի 20-ին նա ընկերոջ միջոցով վաճառել է 42-ամյա կնոջը պատկանող I phone 13 pro max մոդելի հեռախոսը, դրա դիմաց ստացել 200.000 ՀՀ դրամ գումար, իսկ ավտոմեքենան շահագործել իր կարիքների համար:

Նախաքննության ընթացքում երիտասարդի մասնակցությամբ դեպքի վայրում կատարվել է քննչական գործողություն, որի ժամանակ հայտնաբերվել է 42-ամյա կնոջ դիակը:

Որոշումներ են կայացվել՝ դիակի դատաբժշկական, դատագենետիկական փորձաքննություններ նշանակելու մասին: Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ 18-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԴԱՏԱԿԱՆ

# ՆՈՐ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դատավորների թեկնածուների ցուցակի քրեական եւ քաղաքացիական մասնագիտացման բաժինները հատուկ կարգով համալրելու նպատակով անցկացված որակավորման ստուգման հարցազրույցի փուլն ավարտվեց: Ըստ քվեարկության արդյունքների՝ Քաղաքացիական մասնագիտացման բաժնից անցողիկ շեմը հաղթահարել են՝

1. Միշա Էլոյանը,
2. Անի Կարաքեհյանը,
3. Լիլիթ Մկրտչյանը:

Քրեական մասնագիտացման բաժնից անցողիկ շեմը հաղթահարել են՝

1. Գարիկ Աբելյանը,
2. Գոռ Գասպարյանը,
3. Արսեն Գեղամյանը,
4. Գագիկ Հարությունյանը,
5. Գեւորգ Մանուկյանը,
6. Վարսենիկ Մելքոնյանը,
7. Արմեն Շիրոյանը,
8. Արփինե Շտոյանը,
9. Սերժ Ռուշանյանը:

Ստացվում է, որ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի խորհրդականը դատավորների շարքերն է համալրել. Գագիկ Հարությունյանը նրա խորհրդականն էր ինչպես Արդարադատության նախարարությունում, այնպես էլ ԲԴԽ-ում, ու հիմա դատավոր է պատրաստվում դառնալ:

# ՈՐՏԵ՞ՂԻՑ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՄԱՐՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի ամուսինը՝ Արշակ Վարդապետյանը, որը ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի խորհրդականն է, օպերատիվ համարանիշներով է շրջում:

Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Արշակ Վարդապետյանը ԲԴԽ-ում միակ խորհրդականն է, որն ունի ավտոմեքենայի օպերատիվ համարանիշներ, եւ հարց է առաջանում՝ ինչպես են այդ համարանիշները հայտնվել Կարեն Անդրեասյանի խորհրդականի մոտ: Պարզվում է՝ հայրենի դատական համակարգի անկախության թիվ մեկ երաշխավոր կառույցի անդամների համար դեռ ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանը դիմել է ոստիկանություն եւ 10 հատ օպերատիվ համարանիշներ խնդրել: Բնականաբար, ոստիկանությունը բավարարել է Գագիկ Ջհանգիրյանի խնդրանքը եւ ԲԴԽ-ի 10 անդամներին հատկացրել օպերատիվ համարանիշներ: Ու քանի որ ԲԴԽ անդամների փոփոխությունները հաճախ են լինում վերջին տարիներին, ԲԴԽ որոշ անդամների օպերատիվ հարամանիշները փոխանցվել են նորեկներին՝ բացառությամբ մեկի:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ԲԴԽ նորընտիր նախագահ Կարեն Անդրեասյանը որոշել է, որ ԲԴԽ դատավոր անդամ Արշակ Վարդանյանը, որը «իր սրտի պաշտոնյան» չէ, չի կարող օպերատիվ համարանիշներ ունենալ:

Ըստ ամենայնի, հենց նրան «հասանելիք» օպերատիվ համարանիշն է Կարեն Անդրեասյանը տվել իր խորհրդական Արշակ Վարդապետյանին: Իսկ ի՞նչ նպատակ է դա հետապնդում: Դատական համակարգում լուրեր կան, որ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի խորհրդական Արշակ Վարդապետյանը օպերատիվ համարանիշներով հաճախ է լինում տարբեր դատարաններում, հանդիպում դատարանների նախագահների հետ՝ նրանց փոխանցելով Կարեն Անդրեասյանի մեսիջները, թե որ գործով ինչ վճիռ կամ որոշում է անհրաժեշտ քաղաքական իշխանությանը: Այս տեղեկությունը փորձեցինք պարզել անձամբ Արշակ Վարդապետյանից՝ հետաքրքրվելով, թե երբ է ստացել օպերատիվ համարները, եւ արդյոք դատարանների նախագահների մոտ գնալու առաքելության համար է ստացել համարանիշները:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԳԵՐԻ՞, ԹԵ՞ ՍՊԱՆՎԱԾ

# ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾԻ ԾՆՈՂՆԵՐՆ ՈՒ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ



Իրավապահները շարունակում են բացահայտումները այն մասին, թե ինչպես են անհետ կորած զինծառայողների ծնողներից իրենց որդիներին հետ վերադարձնելու համար գումարներ շորթում:

Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Մարտին Հակոբջանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, տեղեկանալով իր ազգական, պարտադիր ժամկետային զինծառայող Արման Արտակի Մինասյանի եւ նրա համածառայակիցներ Շոթա Քաջիկի Բալեյանի, Վանիկ Հայրիկի Սիմոնյանի, Սամվել Հովհաննեսի Ղազարյանի եւ Ջորո Ահարոնի Ասլանյանի՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմին մասնակցելու եւ անհայտ կորելու հանգամանքի մասին, վերջիններիս հարազատներից խարդախությամբ գումար հափշտակելու մեկ միասնական դիտավորությամբ Արման Մինասյանի հայր Արտակ Մինասյանին եւ մյուս անհայտ կորած զինծառայողների հարազատներին իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ է հաղորդել այն մասին, որ Արման Մինասյանը, Շոթա Բալեյանը, Վանիկ Սիմոնյանը, Սամվել Ղազարյանը եւ Ջորո Ասլանյանը չեն զոհվել, այլ գերության մեջ են գտնվում Ադրբեջանի Հանրապետությունում, ավելին՝ դիտավորությամբ մոլորության մեջ է գցել նրանց՝ հայտնելով, որ իր տրամադրած հաշվեհամարին գումար փոխանցելու դեպքում վերջիններիս հետ կվերադարձնի Հայաստանի Հանրապետություն: Մարտին Հակոբջանյանի կողմից խաբեության եւ վստահությունը չարաշահելու արդյունքում 2021 թվականի փետրվար ամսից մինչեւ 2021 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում Վանիկ Սիմոնյանի եղբայրը՝ Սասուն Սիմոնյանը, Մարտին Հակոբջանյանին բանկային փոխանցմամբ ուղարկել է 60,000 ՌԴ ռուբլուն համարժեք 429,000 ՀՀ դրամ, Շոթա Քաջիկի Բալեյանի եղբայր Սերգեյ Սարիբեկյանը՝ 25,000 ՌԴ ռուբլուն համարժեք 178,750 ՀՀ դրամ, Սամվել Ղազարյանի հայր Հովհաննես Ղազարյանը՝ 40,000 ՌԴ ռուբլուն համարժեք 283,200 ՀՀ դրամ, Արման Արտակի Մինասյանի հայր Արտակ Մինասյանը՝ 67,000 ՌԴ ռուբլուն համարժեք 473,690 ՀՀ դրամ, Ջորո Ահարոնի Ասլանյանի մայր Լենա Թադեւոսյանը՝ 27,700 ՌԴ ռուբլուն համարժեք 193,623 ՀՀ դրամ, այդկերպ վերջիններից Մարտին Հակոբջանյանը խարդախությամբ հափշտակել է խոշոր չափի՝ ընդհանուր 1,558,863 ՀՀ դրամին համարժեք 219,700 ՌԴ ռուբլի գումար:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 21-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 68 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ ՂԵԿԱՎԱՐ ՉՈՒՆԻ

Երեւանի պետական համալսարանի Իջեւանի մասնաճյուղի ուսանողական խորհրդի ֆեյսբուքյան էջը հայտնում է, որ հունիսի 20-ին տեղի ունեցավ ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահի ընտրություն: Ուսանողական խորհրդի նախագահի թեկնածու էր առաջադրվել «Պատմություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանող Էռնեստ Խանումյանը: Ընտրական հանձնաժողովի նախագահը մասնաճյուղի տնօրենի պաշտոնատար Ա. Մակարյանն էր, քարտուղարը՝ Ա. Մարգարյանը: 11 կողմ եւ 1 դեմ ձայներով Էռնեստ Խանումյանը ընտրվեց ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահ: Անուշավան Մակարյանը 2019 թվականից ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատարն է. Նախկինում նրան հարցադրում եմ արել, թե ինչու մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ չի կայանում: Նա ասել է, որ այդ հարցը պետք է ուղղել ԵՊՀ ռեկտորին, ում իրավասության ներքո է գտնվում այդ խնդիրը:

## ԱՆՏԵՂՅԱԿ ՄԱՐԶՊԵՏԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը 2023թ. մայիսի 31-ին որոշել ՀՀ Տավուշի մարզպետի 2008թ. մարտի 20-ի թիվ 9Ա կարգադրության 1-ի կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում ներկայացված որոշման հավելվածում Տավուշի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի կազմն է: Մարզպետը հանձնաժողովում ընդգրկել է նաեւ ՀՕՖ-ի Բերդի գրասենյակի տնօրեն Լուսինե Գրիգորյանին (նրա համաձայնությամբ): Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը անտեղյակ է, որ արդեն 4 տարի Լուսինե Գրիգորյանը ՀՕՖ-ի Բերդի գրասենյակի տնօրենը չէ, այդ պաշտոնն այլ անձ է զբաղեցնում:

## ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Հունիսի 19-ի երեկոյան Իջեւան քաղաքում տեղի ունեցած կարկտահարությունը, քամին, ուժեղ անձրեւից գոյացած սելավները մեծ վնասներ են պատճառել Իջեւան քաղաքի տնտեսություններին: Իջեւանի համայնքապետարանը ձեռնամուխ է եղել բնական տարերքի հետեւանքների վերացմանը: Գործում են վնասները հաշվարկող համայնքային եւ մարզային հանձնաժողովներ: Հունիսի 20-ի դրությամբ վնասների գույքագրման համայնքային հանձնաժողովը քաղաքացիներից ստացել է 120 դիմում, որոնց մեծամասնությունը վերաբերում են բազմաբնակարան շենքերի եւ անհատական բնակելի տների տանիքների փլուզմանը, բնակարանների հեղեղմանը: Կարկուտը տեղացել է Իջեւան քաղաքում եւ Գանձաքար բնակավայրի մի հատվածում: Այգիների տուժելու վերաբերյալ ստացված դիմումները վերաբերում են Իջեւան քաղաքում գտնվող տնամերձ հողամասերին:

*ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՕՆԼԱՅՆ

# ՏՈՒՐՔ՝ ՏԱՔՍԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**Հանրապետությունում էլեկտրոնային հարթակների միջոցով մարդատար ավտոմոբիլներով ուղեւորափոխադրման ծառայությունների մատուցումը մեծ կիրառություն ունի, սակայն ոլորտն օրենսդրորեն կարգավորված չէ. Վարորդներն իրենց պատկանող տրանսպորտային միջոցներով իրականացնում են ուղեւորափոխադրումներ, որոնք չեն վերահսկվում եւ չեն հարկվում. այս մասին կառավարության նիստում հայտարարեց ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը՝ ներկայացնելով ոլորտը կարգավորող օրենսդրական փաթեթը:**



Ըստ Սանոսյանի՝ էլեկտրոնային հարթակներ ստեղծած կազմակերպությունները փաստացի ուղեւորափոխադրման գործունեություն են իրականացնում, պատվերներ են ընդունում, փոխանցում են այդ պատվերները վարորդներին, կարգավորում են իրենց հարթակների միջոցով սակագները, նույնիսկ սահմանում են պահանջներ՝ էկոնոմ դաս, բիզնես, կոմֆորտ, եւ այս ամենը՝ առանց իրավական հիմքի, հարկային պարտավորությունների եւ վերահսկողության:

«Առաջարկվում է կանոնակարգել էլեկտրոնային հարթակներով ուղեւորների փոխադրման պատվերներ ձեւավորող եւ փոխանցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը՝ որպես ծանուցման ենթակա գործունեություն:

Առաջարկվում է սահմանել էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայության համար պետական տուրք՝ տարեկան 1 միլիոն դրամի չափով:

Լիցենզավորված մարդատար տաքսի ավտոմոբիլներով, ինչպես նաեւ էլեկտրոնային հարթակների միջոցով թեթեւ մարդատար ավտոմոբիլով ոչ կանոնավոր յուրաքանչյուր փոխադրման համար սահմանել արտոնագիր՝ պետական տուրք, եւ՛ անկանխիկի դեպքում, եւ՛ կանխիկի դեպքում երկու աղյուսակ ունենք: Անկանխիկի դեպքում 2024-ի սեպտեմբերի 1-ից՝ 1,5 տոկոս, 2025-ին՝ 2,5, 2026-ին՝ 4 տոկոս, իսկ կանխիկի դեպքում տոկոսներն ավելի բարձր են՝ 2, 3,5, 5: Այսպես փորձել ենք խթանել անկանխիկը:

Սահմանել էլեկտրոնային հարթակով եւ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղեւորափոխադրման դեպքում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի պարտադիր կիրառություն էլեկտրոնային անդորրագրի տրամադրման պահանջ: Սահմանել ոլորտի իրավախախտումների դեպքում վարչական պատասխանատվության միջոցներ»,- ասաց Սանոսյանը:

Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ փաթեթի շրջանակում առաջարկվում է եւս մեկ փոփոխություն. կանոնավոր ուղեւորափոխադրումների միասնական երթուղային ցանցի գործընթացն ավելի արագացնելու եւ բոլորը ներդրումային առումով գրավիչ դարձնելու համար միջմարզային եւ ներմարզային կանոնավոր ուղեւորափոխադրումների հարկային բեռն են առաջարկում թեթեւացնել եւ հանել միջմարզային եւ ներմարզային կանոնավոր ուղեւորափոխադրումների՝ պետական տուրքի մասին պահանջը: Առաջարկվում է, որ փաթեթն ուժի մեջ մտնի 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նկատեց՝ բարեփոխումը կարեւոր է, եւ հիշեցրեց, թե երբ է առաջացել ոլորտում օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: «Մենք տեսնում էինք շուկայում ակնհայտ միտումներ, որ տաքսի ծառայությունների էլեկտրոնային հարթակները մեծ տեմպերով աճում էին, եւ այն ժամանակ մեր ընկալումը, մեր հեռահար նպատակն այն էր, որ, այսպես ասած, «անհատ տաքսիների հետեւից չգնանք», այլ գնանք պլատֆորմների հետեւից, որոնք ապահովում են աշխատանք:

Երբ տեսնում ենք մի տաքսու վարորդի հետեւից գնալու պարագայում նրա, ենթադրենք, 10 հազար դրամ տուրքը գանձելու համար կարող է մենք ծախսում ենք 15 հազար կամ 9800 կամ 10700 դրամ՝ զուտ վարչարարական ծախսերի առումով, եւ այսպես սիզիփոսյան աշխատանքի տպավորություն էր գործում: Եվ մենք շատ բարդ քննարկումներով եկել ենք, այս եզրակացությանն ենք հանգել»,- ասաց Փաշինյանը:

ՆՈՐ ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐ

# ՀԱՄԱԼՐՈՒՄ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

**«Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալության կողմից Արցախում մեկնարկել է եւս մեկ նոր՝ «Արեւային ջրատաքացուցիչներ Արցախի սոցիալական ոլորտի հաստատությունների համար» ծրագիրը, որի շրջանակում Ստեփանակերտում, Մարտունու, Մարտակերտի եւ Ասկերանի շրջաններում 70-ից ավելի մանկապարտեզներ, առողջապահական հաստատություններ կապահովվեն արեւային ջրատաքացուցիչներով:**

Ծրագրի շահառու հաստատություններում մասնագիտական ընկերության կողմից արդեն սկսվել են չափագրման եւ նախագծման աշխատանքները:

«Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման պայմաններում, երբ ունենք նաեւ խորացող էներգետիկ ճգնաժամ, այս ծրագիրն իսկապես առանձնահատուկ կարեւորություն է ստանում: Սա նշանակում է, որ, անկախ հոսանքի եւ գազի առկայությունից, սոցիալական այս հաստատություններն ապահովված կլինեն տաք ջրով:

Մենք արդեն սկսել ենք աշխատանքները մասնագիտական կազմակերպության հետ եւ ակնկալում ենք, որ առաջիկա ամսվա ընթացքում կսկսեն տեղադրումները»,- ասում է «Մենք ենք մեր սարերը» գործակալության Արցախի նախագծերի ղեկավար Գրիգորի Մարտիրոսյանը:

Այս ծրագիրը եւս, ինչպես գործակալության մյուս ծրագրերը, իրականացվում է պետական-մասնավոր գործընկերությամբ՝ Արցախի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների, առողջապահության ու կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունների հետ: Ծրագիրն իրականացվում է «Մենք ենք մեր սարերը» գործակալության նվիրատուների աջակցությամբ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

## ԱՄՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ԱՄՆ Կանզաս նահանգի նահանգապետ Լորա Քելիի գլխավորած պատվիրակությունը այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանի ուղեկցությամբ: Ամերիկյան պատվիրակության կազմում էր նաեւ ԱՄՆ բրիգադային գեներալ, Կանզասի Ազգային գվարդիայի հրամանատար Մայքլ Վեներդին:

«Հյուրերին դիմավորեց եւ հուշահամալիրի ստեղծման պատմությունը ներկայացրեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն Էդիտա Գզոյանը: Նա անդրադարձավ Ծիծեռնակաբերդի տարածքում անցյալ դարավերջին Ադրբեջանի Սումգայիթ, Կիրովաբադ (Գանձակ), Բաքու քաղաքներում ադրբեջանական կառավարության կազմակերպած կոտորածներին զոհ գնացած հայերի հիշատակին տեղադրված երեք խաչքարերի եւ արցախյան գոյամարտի տարիներին Հուշապատի դիմացի հատվածում հուղարկավորված հինգ ազատամարտիկների պատմություններին՝ շեշտելով, որ տեղի ունեցածը Հայոց ցեղասպանության շարունակությունն էր:

Էդիտա Գզոյանն անդրադարձավ նաեւ Արցախի հիմնահարցի պատմաիրավական ասպեկտներին, ներկայացրեց Ադրբեջանի հակահայկական գործողություններն ու քարոզչությունը:

Տիկին Լորա Քելին ծաղկեպսակ դրեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին, որից հետո հյուրերը ծաղիկներ դրեցին անմար կրակի մոտ եւ մեկ րոպե լռությամբ հարգեցին Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

Էդիտա Գզոյանը հյուրերին ուղեկցեց Հուշապատի մոտ, որի հետնամասում ամփոփված են օտարազգի այն հասարակական, քաղաքական գործիչների, միսիոներների մասունքները, որոնք իրենց բողոքի ձայնն են բարձրացրել ընդդեմ թուրքական կառավարության իրագործած հայերի ցեղասպանության:

Հենրի Մորգենթաուի հայանպաստ գործունեության մասին պատմելով՝ նա շեշտեց, որ Մորգենթաուի, Մերձավոր Արեւելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի կատարած աշխատանքի շնորհիվ ամերիկյան հասարակությունը քաջածանոթ էր Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող հայերի կոտորածներին, եւ որ ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նաեւ հարգանքի տուրք էր այդ մարդկանց հիշատակին: ՀՑԹԻ փոխտնօրենը հյուրերին ներկայացրեց Հիշողության պուրակի պատմությունը եւ նշեց, որ այնտեղ առաջին թվագրված ծառը 1997 թվականով է, որը տնկել է ԱՄՆ սենատոր Ռոբերտ Դոլը՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանությունը վերապրած, ամերիկահայ վիրաբույժ Համբար Քելեկյանի»,- նշված է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆեյսբուքյան էջում:

ՍՊՈՐՏԻ ԵՏՆԱԲԵՄԻՑ

# ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆԸ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ Է

**«Ժողովուրդ» օրաթերթը «Սպորտի ետնաբեմից» խորագրով շարքի շրջանակներում զրուցել է MMA-ի, BMF-ի աշխարհի եւ Open fight championships-ի չեմպիոն Ռաֆայել (Բաֆլո) Աբրահամյանի հետ, որը վերջին շրջանում գտնվում է Հայաստանում:**





Խոսելով կեղծանվան մասին՝ Ռաֆայելը պատմում է՝ քանի որ մայիսի 14-ին է ծնվել եւ հորոսկոպով ցուլ է, ու, բացի դա, թե՛ սիրողական եւ թե՛ պրոֆեսիոնալ մակարդակում առաջին մարտերից հետո միշտ ասում էին, որ ցուլի նման է մենամարտում, ժամանակի ընթացքում սկսեցին ճանաչել որպես Bufflo՝ ցուլ:

**Մարզիկը պատմում է, որ նախքան MMA-ը զբաղվել է ֆուտբոլով.**

-Շատ քչերը գիտեն՝ MMA-ից առաջ կյոկուշինով ու ֆուտբոլով եմ զբաղվել: 6 տարեկանում հայրս ինձ տարել էր կյոկուշինի, մինչեւ 12 տարեկան մարզվել եմ: Զուգահեռ նաեւ ֆուտբոլով էի զբաղվում, որովհետեւ այնպիսի տեղում էինք ապրում, որ մարզադահլիճները իրար կողք էին. հա՛մ մարզվում էի, հա՛մ բակում ֆուտբոլ էինք խաղում: Սկսեցի ավելի շատ ֆուտբոլով զբաղվել, ու այդպես կյոկուշինը երկրորդ պլան գնաց:

**Ռաֆայելի խոսքով՝ առաջին մարտերը ընկերների հետ է եղել Սամարայում:**

-Դահլիճը նկուղային հարկում էր, շատ վատ պայմաններ էին, նույնիսկ ձեռնոցներ չունեինք, մենք էլ 16-17 տարեկան երիտասարդներ էինք: Ժամանակի ընթացքում այդ ամենը սկսեց դուրս գալ, տարվեցի այդ մարզաձեւով: Այս անգամ արդեն ֆուտբոլը գնաց երկրորդ պլան:

**Խոսելով այն հանգամանքերի մասին, որոնք առաջ են մղում մարզիկին, Ռաֆայելը փաստում է, որ եթե կա ցանկություն, ո՛չ տաղանդը կապ ունի եւ ո՛չ էլ տարիքը:**

-Ցանկությունը ամեն ինչին հաղթում է: Եթե դու ուզում ես քո նպատակին հասնել, ոչինչ քեզ խանգարել չի կարող, բացի քեզնից: Միայն դու քո գլխի մեջ կարող ես խանգարել քեզ: Եթե ինքդ քո դեմ պատնեշներ չդնես, ամեն ինչի էլ կհասնես: Ես մինչեւ այսօր ունեմ այդ ձգտումը, ինձ կյանքում ոչինչ չի կարողացել կանգնացնել: Ես ունեցել եմ իմ նպատակներն ու երազանքները եւ շարժվել եմ առաջ: Շատ մարդիկ ինձ խանգարել են, մինչեւ հիմա են խանգարում: Շատ մարդիկ ինձ նախանձել են, մինչեւ հիմա են ինձ նախանձում, բայց իմ մոտիվացիան երբեք չի լքել:

Իմ անձնականի հետ շատ քչերն են ծանոթ, շատ քիչ մարդիկ գիտեն՝ինչ դժվարությունների միջով եմ ես անցնում: Նույնիսկ պահ է եղել, երբ ես կարիերաս պիտի ավարտեի՝ կապված հորս առողջության վատթարացման հետ, բայց իմ մեջ ուժ գտա շարունակելու: Չգիտեմ՝ մինչեւ երբ ու ինչպես կշարունակեմ ու ուր կհասնեմ, բայց վստահ եմ, որ այն ցանկությունն ու սերը, որն իմ մեջ կա այդ սպորտի հանդեպ, չի կարող կանգնեցնել ինձ երբեւէ:

Ամբողջական զրույցը՝ ArmLur.am կայքում:

*Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԸ*

ՈՐՈՇՈՒՄ

## ՍԻԳԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ

Կառավարությունը հունիսի 22-ի նիստում Հայաստանի տարածքից սիգի ձկնկիթի արտահանման ժամանակավոր արգելք սահմանեց:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ որոշումը բխում է ՀՀ պարենային անվտանգության, Սեւանա լճում կենսապաշարի կայուն օգտագործման եւ կենսաբազմազանության պահպանության պահանջից:

Սեւանա լճում սիգի արդյունագործական որսի կանոնակարգման գործընթացի արդյունքում վերջին տարիներին Սեւանա լճում նկատվում է սիգի կենսազանգվածի աճ (2019 թվականին՝2668 տոննա, 2020 թվականին՝2345 տոննա, 2021 թվականին՝ 5348 տոննա 2022 թվականին՝ 4700 տոննա), ինչը հնարավորություն է տալիս ապահովել Սեւանա լճում փոքր քանակությամբ ձկան արդյունագործական որսի իրականացում (2020 թվականին՝ 300 տոննա, 2021 թվականին՝ 300 տոննա, 2022 թվականին՝ 600 տոննա, 2023 թվականին՝300 տոննա):

Սակայն վերջին տարիների սիգի կենսազանգվածի աճի տենդենցը դեռեւս չի ապահովում վայրի ձկնատեսակի բնականոն աճն ու օպտիմալ թվաքանակը լճում (համաձայն որոշ գիտական տվյալների՝ մինչեւ 10000 տոննա ընդհանուր պաշար, արդյունագործական որսը՝ շուրջ 2000 տոննա եւ ավել): Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում դեռեւս չունենք այնպիսի վայրի ձկնատեսակ, որի ձկնկիթը ունենա արտադրական նշանակություն, քանի որ դեռ անհրաժեշտ է ձկնատեսակի ծավալների շարունակական ավելացում:

Հաշվի առնելով Սեւանա լճում սիգի արդյունագործական որսի կանոնակարգման գործընթացի մեկնարկային եւ պիլոտային լինելու հանգամանքը, ինչպես նաեւ վերջին տասնամյակների ընթացքում լճի վրա մարդածին մեծ բացասական ազդեցությունն ու կենսառեսուրսների նկատմամբ ձեւավորված սպառողական վերաբերմունքը, հնարավոր բացասական հետեւանքները կանխարգելելու, արդյունագործական բարձր արժեք ունեցող վայրի ձկնատեսակի պահպանությունը եւ բնականոն վերարտադրությունը կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով՝ սույն իրավական ակտով նախատեսվում է սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքից սիգի ձկնկիթի արտահանման արգելք:

Նախագծով առաջարկվում է վեց ամիս ժամկետով արգելք սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքից սաղմոնազգիներին պատկանող սիգի ձկնկիթի արտահանման նկատմամբ:

Որոշումն ուժի մեջ կմտնի հուլիսի 2-ից:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Գոռ Արսենի Հարությունյանի N AK 088342 դիպլոմը՝ տրված ՀՀ ԱՆ Երեւանի «Էրեբունի» պետական բժշկական քոլեջի կողմից 10 հունիսի 2010 թվականին:

Գրանցման համար՝ N 457, որով Գոռ Հարությունյանին շնորհվել է Բուժակ-մերսողի բակալավրի աստիճան:

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՏԱՐԵԼԻՑ

# ՇՆՈՐՀԱԼՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

**Հայ եւ օտարազգի անվանի հայագետները, երիտասարդ եւ ավագ սերնդի հետազոտողները «Ներսես Շնորհալի՝ բազմաշնորհ հայրապետը» հայագիտական միջազգային գիտաժողովին կանդրադառնան Շնորհալու թողած բազմաբնույթ ու բազմաշերտ մատենագրական ժառանգությանը, համաքրիստոնեական ու համամարդկային գաղափարներին, կգնահատեն ոլորտի ձեռքբերումները, ինչպես նաեւ նոր չափանիշներ եւ ուղղություններ կնախանշեն շնորհալիագիտության ասպարեզում:**



Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցի շրջանակում կազմակերպված գիտաժողովը մեկնարկեց հունիսի 21-ին Մաշտոցյան Մատենադարանում:

Մատենադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Մաթեւոսյանի խոսքով՝ Շնորհալու մահվան 850-րդ տարելիցն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների 2022-2023 թվականների օրացուցում, ինչի շնորհիվ միջոցառումներ են անցկացվելու եւ՛ Հայաստանում, եւ՛ արտերկրում: «Անթիլիասում արդեն միջազգային գիտաժողով է անցկացվել, իսկ նոյեմբերին՝ Վատիկանում: Հունիսի 27-ին Փարիզում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում, տեղի են ունենալու Ներսես Շնորհալու երկհատորյակի շնորհանդեսը, գիտաժողով ու համերգ: Մատենադարանը գիտահետազոտական ինստիտուտ է եւ կատարել է ամենահիմնական գործը եւ երկու հատորով հրատարակել է Շնորհալու ամբողջ գիտական ժառանգությունը, իսկ այս գիտաժողովի ընթացքում վաթսուն զեկույց կլինի՝ նվիրված Ներսես Շնորհալու կյանքին, գործունեության տարբեր ոլորտներին»,- շեշտեց Մաթեւոսյանը:

Նա նշեց՝ Շնորհալին շատ լայնախոս ու բազմաճյուղ գործիչ է եղել, ու հիշեցրեց, որ նրա «Թուղթ ընդհանրական»-ը դիմում է հայ ժողովրդի տարբեր շերտերին՝ իշխաններին, զինվորականներին, արհեստավորներին, հոգեւորականներին, ճգնավորներին: «Նրա ստեղծագործությունները ժամանակին հրատարակվել են, սակայն գիտաժողովը եւս մեկ առիթ է նրա մասին հիշեցնելու համար: Շնորհալին այն քիչ հայրապետներից մեկն է, որ դասվել է սրբերի շարքում»,- ընդգծեց Մատենադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրն ընթերցեց Տեր Ասողիկ աբեղա Կարապետյանը: Ուղերձում ասվում էր, որ Ներսես Շնորհալին իր լուսավոր ծառայագործությամբ, հավատավոր հոգուց ու երկնաճեմ մտքից բխած աղոթքներով, քարոզներով, պատգամներով ու երգերով ծաղկեցրեց հայոց ազգային հոգեւոր կյանքը, բարեզարդեց եկեղեցական անդաստանը: «Նա անգնահատելի ներդրում բերեց հայոց քրիստոնեական ինքնության պահպանմանը, հոգեւոր եւ մշակութային առաջընթացին, հայորդյաց բարեպաշտության ու ազգանվիրումի ամրապնդմանը»,-ասվում էր ուղերձում:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի օրհնության գիրը կարդաց Տեր Շահան արքեպիսկոպոս Սարգսյանը: «Շնորհալին իր եզակի ստեղծագործական վաստակով կարեւոր ներդրում ունի մեր եկեղեցու աստվածաբանական մտածողության, դավանաբանական կեցվածքի, ծեսի կազմավորման եւ հայ մատենագրության հարստացման գործում»,- ասվում էր ուղերձում եւ շեշտվում, որ գիտաժողովը կարող է առիթ հանդիսանալ վերլուծելու Ներսես Շնորհալու յուրահատուկ տեղը հայ մատենագրության եւ, առհասարակ, հայ մշակույթի արծաթե դարում:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսքն ընթերցեց նախարարության Մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը: Նախարարի ուղերձում ընդգծվում էր, որ տարին լավ առիթ է վերաիմաստավորելու եւ վերարժեւորելու միջնադարի հայկական հոգեւոր եւ մշակութային ժառանգության հանգուցային ներկայացուցչի կյանքն ու գործունեությունը, որը կարեւոր նշանակություն է ունեցել մեր ազգային դիմագծի, մշակույթի ու լեզվի ամրապնդման գործում: «Հատկապես ցանկանում եմ ընդգծել Շնորհալու քաղաքական եւ հասարակական գործունեության կարեւորությունը, գործունեություն, որը բացառիկ, որոշ առումներով շրջադարձային նշանակություն է ունեցել ազգային կարեւոր նպատակների եւ արժեքների հաստատման ու արմատավորման համար, դարձել ուղենշային ազգային համախմբվածության, կենտրոնացված պետականության ստեղծման խոսույթի շրջանակում: Այսօր էլ Շնորհալու «Թուղթ ընդհանրական» եւ «Ողբ Եդեսիոյ» ստեղծագործությունները, որոնք մեր միջնադարի լավագույն գրական նմուշներից են, չեն կորցրել իրենց արդիականությունն ու խտացնում են հզոր պետականություն ունենալու հայ ժողովրդի պատմական ազգային իղձերը»,- ասվում էր ողջույնի խոսքում:

Գիտաժողովը, որը նպատակ ունի վերարժեւորել եւ նորովի գնահատել միջնադարի մեծ մտածող, բանաստեղծ, աստվածաբան ու շարականագիր Ներսես Շնորհալու (Ներսես Դ Կլայեցի Կաթողիկոս Ամենայն Հայոց (1166-1173)) եւ նրա մատենագրական ժառանգության բացառիկ դերն ու նշանակությունը հայ միջնադարյան գրականության եւ մշակույթի մեջ, անցկացվելու է հունիսի 21-23-ը:

ՄԱՐԶԱԿԱՆ

# ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է



Լեհաստանի Կրակով քաղաքում պաշտոնապես տրվել է Եվրոպական ամառային երրորդ խաղերի մեկնարկը. խաղերի ընթացքում 49 երկրի ավելի քան 7000 մարզիկ-մարզուհիներ 28 մարզաձեւում կպայքարեն մեդալների 253 հավաքածուի համար:

Կրակովի Հենրիկ Ռեյմանի անվան մարզադաշտում տեղի ունեցած բացման հանդիսավոր արարողության ժամանակ լուսային ու ձայնային գեղեցիկ շոու ծրագրով նախ ներկայացվել է երկրի պատմությունը, ապա անդրադարձ է կատարվել լեհ անվանի գործիչներին՝ մշակույթից մինչեւ գիտություն:

Այնուհետեւ տեղի է ունեցել դրոշների շքերթը. Հայաստանի դրոշակակիրներն են եղել աթլետներ Լեւոն Աղասյանն ու Գայանե Չիլոյանը:

Համերգային ծրագրից հետո խաղերի մասնակիցներին ողջունել եւ հաջողություն են մաղթել Լեհաստանի նախագահ Անջեյ Դուդան, Եվրոպական օլիմպիական կոմիտեի նախագահ Սպիրոս Կապրալոսը եւ այլք: Ներկաներին տեսաուղերձ է հղել նաեւ ՄՕԿ նախագահ Թոմաս Բախը: Այնուհետեւ հանդիսավոր կերպով վառվել է Եվրոպական երրորդ խաղերի կրակը:

Նշենք, որ Եվրոպական ամառային երրորդ խաղերում արդեն իսկ մեկնարկել են մարզական մրցումները: Մեր պատվիրակներից առաջինը պայքարի են դուրս եկել աթլետները, որոնք մասնակցում են Եվրոպայի թիմային առաջնությանը՝ երրորդ դիվիզիոնում:

Մրցումային առաջին օրը հավաքականի առաջատար եռացատկորդ Լեւոն Աղասյանը դարձել է երրորդ դիվիզիոնի հաղթող՝ 16,36 մ արդյունքով զբաղեցնելով առաջին հորիզոնականը: Նա 45 սմ-ով գերազանցել է Ադրբեջանի եւ Վրաստանի ներկայացուցիչներին: Վազորդ Երվանդ Մկրտչյանն էլ հունիսի 22-ին 1500 մետր մրցատարածությունում 3:44:11 արդյունքով երրորդ դիվիզիոնում զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը:

Կրակովում օրերս անցկացվել է նաեւ կայծակնային շախմատի Եվրոպայի զույգերի առաջին առաջնությունը, որտեղ Հայաստանի թիմը՝ ի դեմս Էլինա Դանիելյանի եւ Շանթ Սարգսյանի, նվաճել է չեմպիոնի տիտղոսը: Անհատական հաշվարկում Էլինան գրավել է առաջին, իսկ Շանթը՝ երկրորդ տեղը: Առաջնությանը 8 երկրի թիմ է մասնակցել, յուրաքանչյուրում՝ մեկ տղամարդ եւ մեկ կին մասնակից:

Հայաստանը Եվրոպական ամառային երրորդ խաղերում 57 մարզիկ է ներկայացնում՝ 9 մարզաձեւում:

ԹԱՏՐՈՆ

# ԿՄԵԿՆԵՆ ԱՐՏԵՐԿԻՐ՝ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԻ

**Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնը կմասնակցի արտերկրում գործող ռուսական թատրոնների միջազգային 5-րդ փառատոնին, որը կանցկացվի Նաբերեժնիե Չելնի քաղաքում:**

Հունիսի 23-ին ռուսական թատրոնը կցուցադրի Ա.Ն. Օստրովսկու պիեսի հիման վրա բեմադրած «Բալզամինովի ամուսնությունը» ներկայացումը՝ թատրոնի գեղարվեստական ղեկավար Կարեն Ներսիսյանի ռեժիսուրայով: Պիեսի առանցքում խելքից, գեղեցկությունից ու տաղանդից զուրկ զվարճալի մարդուկն է, որը փորձում է դասավորել իր կյանքը, երազում է, կամակորություններ եւ հիմարություններ է անում եւ անսպասելիորեն շահած է դուրս գալիս ստեղծված իրավիճակից: Հեղինակային վերամբարձ, միաժամանակ անասելի թեթեւ տեքստում սուր հեգնանք կա, ժանրային զվարճալի պատկերներում՝ անողոք սարկազմ: Ներկայացման մեջ զբաղված են Լալիտա Բուկիան, Անտոն Աղաջանյանը, Ելենա Վարդանյանը, ՀՀ վաստակավոր արտիստ Վերոնիկա Սարոյանը, Յուլյա Ժդանովան, Անահիդա Գաբրիելյանը, Լեւ Նալբանդյանը, Ելենա Եսայանը, Թեհմինե Խաչատրյանը: Ներկայացման բեմանկարիչն Արթուր Հարությունյանն է, զգեստների նկարիչը՝ Մերի Սարգսյանը, պարերը՝ Նունե Կիրակոսյանի, երաժշտական ձեւավորումը՝ Կարեն Ներսիսյանի: Փառատոնի հանդիսավոր բացումը վստահված է Երեւանի Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնին: Ծրագրում ընդգրկված են 7 երկրներից ժամանած առաջատար թատերական կոլեկտիվներ: «Բալզամինովի ամուսնությունը» ներկայացումը կմեկնի նաեւ հյուրախաղերի Սարատով (ՌԴ)՝ «Մեծ հյուրախաղեր» ծրագրի շրջանակում: Սարատով քաղաքում ռուսական թատրոնը կներկայացնի նաեւ Դ.Նիգրոյի «Մարդիկ: Գազաններ: Հանգամանքներ» ներկայացումը (բեմադրությունը՝ Կարեն Ներսիսյանի):

«Տասնմեկ կարճ պատմվածքներ՝ կյանքի իմաստի եւ այսօրվա մասին». սա ամերիկացի դրամատուրգ Դոն Նիգրոյի պիեսի առաջին բեմադրությունն է Հայաստանում, չնայած նրա անունը լայնորեն հայտնի է թատերական աշխարհում: Ներկայացման ռուսերեն թարգմանությունը վերնագրված է՝ «Պատմություններ գազանների մասին»: Ներկայացման մեջ խաղում են թատրոնի թե՛ ավագ, թե՛ երիտասարդ սերնդի դերասաններ՝ ՀՀ վաստակավոր արտիստ Աննա Բալանդինան, Անտոն Աղաջանյանը, Էրվին Ամիրյանը, Ելենա Վարդանյանը, Արման Մեժլումյանը, Լիլյա Մուկուչյանը, Լեւ Նալբանդյանը, Լալիտա Բուկիան, Արթուր Պետրոսյանը, Մանվել Խաչատրյանը, Հայարփի Ջուռնաչյանը, Հռիփսիմե Նահապետյանը, Վազգեն Հովհաննիսյանը, Թեհմինե Խաչատրյանը: Բեմանկարչությունն իրականացրել է Արթուր Հարությունյանը, զգեստները՝ Գայանե Չոլակյանի, խորեոգրաֆիան՝ Արա Ասատուրյանի: «Բալզամինովի ամուսնությունը» կցուցադրվի հունիսի 25-ին Սարատովի Սլոնովի անվան դրամատիկական թատրոնում, իսկ «Մարդիկ: Գազաններ: Հանգամանքներ» ներկայացումը՝ հունիսի 26-ին Սարատովի Յ.Պ. Կիսելյովի անվան պատանի հանդիսատեսի թատրոնի Պատմական բեմում:

● *Հունիսի 24-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Լոռեցի Սաքոն» ներկայացումը: Տոմսերի արժեքը 2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

## ՎԱՐԿ

**ՀԱՐՑ. Ես կատարել եմ վարկի մարում նախկին բանկում ինձ տրամադրված վարկային կոդով, բայց վարկս չի մարվել: Ինչպե՞ս դեսք է լուծվի խնդիրը:**
*Վարդուհի Սիմոնյան (53 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Եթե Դուք կատարել եք վարկի մարման գործարք նախկին բանկում Ձեզ տրամադրված վարկային կոդով, փոխանցված գումարը չի ուղղվի Ձեր՝ արդեն «Արդշինբանկ»-ում սպասարկվող վարկի մարմանը: Անհրաժեշտ է կատարել «Արդշինբանկ»-ում վարկի մարում Ձեզ տրամադրված նոր վարկային կոդով ժամկետանց պարտավորությունների առաջացումից խուսափելու համար:

Ձեր՝ այլ բանկի վարկային կոդով փոխանցված գումարը կվերադարձվի Ձեզ՝ առանց լրացուցիչ դիմումի:

Եթե, այնուամենայնիվ, Ձեր վարկը ժամկետանցվել է այլ բանկի վարկային կոդով փոխանցում կատարելու հետեւանքով, Ձեր դիմումի հիման վրա՝ «Արդշինբանկ»-ը կկատարի ժամկետանց պարտավորության սրբագրում:

*«Արդշինբանկ»*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ձեր վարկի նոր վարկային կոդի մասին կարող եք տեղեկանալ՝

- Բանկից ստացված sms-տեղեկացումից, Ձեր էլ. փոստին ստացված տեղեկատվական նամակից,
- Զանգահարելով բանկի կոմունիկացիոն կենտրոն 012222222 հեռախոսահամարով,
- Թողնելով հետզանգի պատվեր www.ardshinbank.am կայքում,
- Այցելելով բանկի որեւէ մասնաճյուղ: Մասնաճյուղերի հասցեները եւ աշխատանքի ժամերը հասանելի են հետեւյալ հղումով. https://www.ardshinbank.am/branches-and-atms:

## ՊՐՈԲԱՑԻԱ

**ՀԱՐՑ. Ո՞վ կարող է լինել պրոբացիայի դոնոր:**
*Կամո Սեւոյան (39 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Կամավոր կարող է լինել տասնութ տարին լրացած այն անձը, որը՝

1) տիրապետում է հայերենին,

2) ուսանում է իրավագետի, սոցիոլոգի կամ հոգեբանի մասնագիտությամբ կամ ունի պրոբացիայի ծառայության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան որակավորում:

*Պրոբացիայի ծառայություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Կամավոր չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, կամ՝

2) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, կամ՝

3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Ազատության հրապարակում նշվել է Յոգայի 9-րդ միջազգային օրը, որին ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւ ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության նորանշանակ դեսպան Նիլակշի Սահա Սինհային: Միջոցառման ընթացքում յոգայի մասնագետները ցուցադրել են յոգայի տարբեր դիրքեր, մեկնաբանել դրանց նշանակությունը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անվճար կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

### ԱՌԱՋԱՐԿ
### հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Շիրակ | +5 +8<br>+14 +16 | | Արարատ | +14 +16<br>+21 +23 |
| Կոտայքի լեռներ | +5 +8<br>+13 +16 | | Արմավիր | +12 +14<br>+21 +23 |
| Կոտայքի նախալեռներ | +12 +15<br>+17 +20 | | Վայոց ձորի լեռներ | +6 +8<br>+13 +16 |
| Գեղարքունիք | +5 +9<br>+13 +16 | | Վայոց ձորի նախալեռներ | +14 +16<br>+20 +22 |
| Լոռի | +8 +10<br>+12 +15 | | Սյունիքի հովիտներ | +13 +16<br>+20 +25 |
| Տավուշ | +9 +13<br>+13 +16 | | Սյունիքի նախալեռներ | +8 +11<br>+13 +16 |
| Արագածոտնի լեռներ | +5 +7<br>+13 +15 | | Արցախ | +13 +16<br>+20 +25 |
| Արագածոտնի նախալեռներ | +11 +14<br>+17 +21 | | Երեւան | +13 +15<br>+18 +20 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*